ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ
պատմական գիտ. դոկտոր

ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԹՈՌԸ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԺԴ դ. վերջին եւ ԺԵ-ի սկզբներին Վասպուրականը եւ Հարավային Հայաստանի մյուս շրջանները Լենկթեմուրի աշխարհավեր արշավանքների պատճառով ենթարկվեցին անլուր խժդժությունների: 1395 թ. Խիզան քաղաքում Մաշտոց օրինակած Ստեփաննոս գրիչն իր թողած հիշատակարանում նշում է. «... ի մերում հայրապետութեանս Տէր Դաւթի Աղթամարեցոյ, եւ ի թագաւորութիւնս այլասեռից Լանկ–Թամուրի... զչարութիւնն նորա, զոր գործեաց առ եկեղեցիքն եւ առ եկեղեցականքն եւ առ հաւատացեալս ո՛ կարասցէ պատմել, զի բազումք սրով կատարեցան, եւ բազումք սովալլուկ եղեալ, եւ այլք առ ոտս ձիոց անկեալ կատարեցան չարաչար կոտորմանաւք...»[1]: Ժամանակակից ուրիշ գրիչների թողած հիշատակարաններում ևս հառնում է Լենկթեմուրի օրոք ստեղծված ահազարհուր իրականությունը[2]:

Դառնաղետ ու օրհասական պայմաններում անգամ ժողովրդին չէին լքում հոգեւոր եւ քաղաքական անկախության հույսերը, որոնք խարսխվում էին կաթողիկոսական իշխանության հանդեպ տածած հավատի ու նրա զորության ընկալման վրա: 1401 թ. Վասպուրականում ծավալված բռնությունների, սարսափելի սովի ժամանակ խիզանցի գրիչ Զաքարիան աղերսանք է վերառաքում առ Աստված, որպեսզի անսասան պահի «զաթոռ մերոյս հայրապետի եւ մեր ազին թագաւորի, զի յիշել զանուն սոցա սասանել սաքրին եւ ոչ ևս երեւին թշնամիք ճշմարտութեան»[3] (նկատի ունի Աղթամարի Դավիթ Կաթողիկոսին (1393–1433 թթ.): 1404 թ. բռնկված համաճարակի ժամանակ, երբ այն «կոտորէր զամենայն առհասարակ», Ռշտունիք գավառի Տշող գյուղում ձեռագիր օրինակած Ստեփաննոս գրիչը Աղթամարի կաթողիկոսությունը դիտում է որպես «Աթոռ հայրապետական եւ թագաւորական»[4]: Հետագայում Աղթամարի Կաթողիկոս Զաքարիա Գ–ի (1434–1464) Աթոռը հիշվում է որպես «թագաւորական», իսկ ինքը՝ «յազգէն» Գագիկ Արծրունի թագավորի[5]:

ԺԵ դ սկզբներին Աղթամարի կաթողիկոսության իրավասության ոլորտում էին Վասպուրականը, Մոկքը, Գորդուքը[6]:

---

1 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 611:

2 Տե՛ս **Գ. Սրուանձտեան**, Թորոս Աղբար, Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 391, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն 1-ին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1955, էջ 6, 8 եւ հտ.:

3 Անդ, էջ 8:

4 **Ղ. Փիրղալէմեան**, Նօրարք Հայոց, Կ. Պոլիս, 1888, էջ 23:

5 Անդ, էջ 156, 208:

6 Տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, Բ հատոր, Ս. Էջմիածին, 2001 սյունակ 2357:

Հայոց կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից իր նախնավանդ ու սրբազան վայրը՝ Ս. Էջմիածին տեղափոխելու երազանքը սնուցվում էր նաև Հարավային Հայաստանում: Աղթամարի Աթոռն օժտված էր Հայրենի եզերքում կաթողիկոսության հատկանիշներով, մինչդեռ Սսի Աթոռը անկում էր ապրում, նրա գահակալները հեղինակազրկվել էին: Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածին տեղափոխելու նախանձախնդիր Գրիգոր Տաթևացին չէր կարող անտեսել այդ ծանրակշիռ հանգամանքը: Դեռևս 1406 թ. նա Սյունիքից իր աշակերտների հետ հեռացավ Վասպուրականի կողմերը եւ հաստատվեց Մեծոփա վանքում[7]: Նույն ժամանակ օրակարգում դրվեց 1114 թ. Սեւ լեռան Կարմիր վանքում գումարված եկեղեցաժողովի կողմից Աղթամարի կաթողիկոսությունը նզովքի ենթարկելու վճռի վերացման խնդիրը: Այդ նպատակով Գրիգոր Տաթևացին «մեծահանդէս ժողով արարեալ՝ արձակեաց զամենեսեան ի կապանաց հնոց կաթողիկոսացն եւ վարժապետացն մերոց»[8]: Ըստ Մ. Չամչյանցի, Աղթամարի կաթողիկոսության վրայից բանադրանքը վերացվելու էր Հակոբ Գ Սսեցի Կաթողիկոսի (1408–1411) կամքով՝ ի գին Աղթամարի Աթոռի լուծարման եւ նրա վիճակները Սսի Աթոռի իրավասությանը ենթարկելու: Այդ ոգով վերը նշված ժողովը որոշում է կայացնում: Ժողովականների երկարաբան թղթով Հակոբ Գ Կաթողիկոսից խնդրվում է Աղթամարի Աթոռը նզովքից ազատելու հարցը դնել կանոնական հենքի վրա եւ հատուկ օրինագիր ուղղել վասպուրականցի եկեղեցականներին՝ հավաստելով, որ Սսի Աթոռին նրանց հնազանդվելու դեպքում Հակոբ Գ–ն Աղթամարի վիճակների համար ձեռնադրելու է եպիսկոպոսներ, մյուռոն է ուղարկելու: Ապա ժողովական այդ թղթում Հակոբ Կաթողիկոսին տեղեկացվում էր, որ Աղթամարի Աթոռին ենթակա բոլոր թեմերը «զղջանան եւ ի հնազանդութիւն քեզ գան. եւ լինեցին մի հօտ եւ մի հովիւ»:

Հակոբ Գ Հայրապետն իր հերթին իբր չի հապաղում թուղթ ուղարկել «յականաւոր մայրաքաղաք» Արճեշ եւ «ի սուրբ ուիտն Մեծոփայ»՝ տալով իր համաձայնությունը ժողովի վճռին[9]: Ըստ այդմ վասպուրականցի եկեղեցականները նշյալ թղթով արտահայտել են իրենց համաձայնությունը Աղթամարի կաթողիկոսության վերացման վճռին: Սակայն իրականությունն այլ էր: Այդ ժողովից հետո Աղթամարի Աթոռը չվերացավ եւ պահպանեց իրավազորությունը իրեն ենթակա եկեղեցական վիճակներում: Ուստի վերապահությամբ պետք է մոտենալ Չամչյանի այդ հաղորդմանը[10]:

Ամենայն հավանականությամբ Գրիգոր Տաթևացին գործել է առանց Սսի Աթոռի համաձայնության՝ փորձելով վերացնել բանադրանքը, որը երկար դարեր ծանրացած էր Աղթամարի կաթողիկոսության վրա: Իր այդ քայլով նա կամենում էր զորացնել Հայոց բնաշխարհի եկեղեցական համակարգը ի հեճուկս Սսի կաթողիկոսության: Տաթևացին բնական ու օրինական էր համարում Մայր Աթոռի՝ Հայրենի երկրում եւ ոչ թե նրանից դուրս գտնվելը: Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ էր, որպեսզի Հայաստանի եկեղեցին լիներ միասնական: Դրան էր միտված Աղթամարի կաթողիկոսության վրայից նզովքը վերացնելը: Տաթևացու հրավիրած ժողովի վճռով բանադրանքից ազատ էին արձակվում Աղթամարի կա-

7 Տե՛ս **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրութիւն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999, էջ 79:
8 Անդ, էջ 81:
9 Տե՛ս **Մ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 455–456:
10 Հմմտ. **Ն. Ակինեան**, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 73:

թողիկոսությունը՝ իր վիճակներով հանդերձ, այդ թվում «զԿաթողիկոսն Աղթամարայ զտէր Դաւիթ եպիսկոպոսօք եւ վարդապետօքն, ամենայն քահանայօք եւ սարկաւագօք, ամենայն աստիճանաւորքն ժողովրդականօք եւ կանայք ամենայն կենդանիք եւ հանգուցեալք եղիցին յահեալք եւ արձակեալք ամենայն կապանաց անիծից եւ բանադրանաց եւ ի մեղաց...»[11]:

Իհարկե, վերջին խոսքը պատկանում էր Սիսի ընդհանրական Աթոռին: Պետք է ենթադրել, որ Հակոբ Կաթողիկոսը չի համաձայնել ժողովի որոշմանը: Հավանաբար Հարավային Հայաստանի որոշ եկեղեցականներ կողմ են եղել Հակոբ Կաթողիկոսին, զուցե եւ հալածել են Տաթեւացուն ու նրա կողմնակիցներին[12]:

Այն, որ Գրիգոր Տաթեւացին անձամբ ձեռնամուխ եղավ Աղթամարի Աթոռը նզովքից մեղսազերծելուն, ուներ, նաեւ ուրիշ դրդապատճառներ: Այդ բանադրանքի հետեւանքով, ինչպես նշվում է մի ձեռագիր հիշատակարանում, հայերի հանդեպ հարուցվեց «նախատինս ամենայն ազգաց քրիստոնէից... որ բամբասեն զմեզ եւ նախատեն՝ եթէ մոլորեալք են եւ անհնազանդ գլխոյն իւրեանց»[13]: Տակավին 1290 եւ 1295 թվականներին փորձեր էին արվել Աղթամարի Աթոռի վրայից հանելու նզովքի վճիռը, սակայն դրանք արդյունքի չէին հանգեցրել[14]:

Աղթամարի Աթոռի վրայից բանադրանքի վերացումը բնականաբար ցնծությամբ դիմավորեցին Հարավային Հայաստանում: 1410թ. Մեծոփա վանքում Ղազար գրչի ընդօրինակած Գրիգոր Տաթեւացու Քարոզգրքի հիշատակարանում ասվում է, որ Տաթեւացին «արձակեաց զմեզ ի բանադրութենէ անիծից... եւ երեր ազգիս Հայոց զփրկական համբաւն եւ առաջնորդեաց արժանաւորացն մտանել ի միաբանութիւն եւ ի հնազանդութիւն գերադրական եւ Սուրբ Աթոռոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ...»[15]:

Սիսի Աթոռը չի վերացրել բանադրանքը, անշուշտ, ելնելով նաեւ Աղթամարի Աթոռի անկախ դիրքավորման փաստից, ինչը հարվածում էր Սիսի կաթողիկոսության հեղինակությանը: Հետագայում Կիրակոս Վիրապեցու հակառակորդները նրան մեղադրում էին այն բանի համար, որ նա «ի կողմանէն Աղթամարայ է, որ ի բազում ժամանակաց հետէ բանադրեալք են»[16]: Աղթամարի կաթողիկոսության վրայից նզովքը կարող էր վերացնել միայն Հայոց ընդհանրական Աթոռն ի դեմս Կիրակոս Վիրապեցի Կաթողիկոսի, որը «զբանադրութիւն եւ զկապանք կղզոյն Աղթամարայ յօրհնութիւն փոխեաց»[17]: Եկեղեցին էր իշխում ժողովրդի աշխարհընկալմանը, մտքին ու բանականությանը, նա էր միայն, որ ի զորու էր Աղթամարի Աթոռի վրայից թոթափել նզովքն ու նրա հարուցած կնճիռները: Միջնադարյան մտահայեցությամբ բանադրանքը կարող էր պատճառ դառնալ երկրային կյանքում տեղի ունեցող դժբախտությունների: Աղթամարի կաթողիկոսությանը ենթակա վիճակների բնակչության որոշ մասի մեջ արմատացած էր մնում այն մտայնությունը, թե Աղթամարի Աթոռը

11 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 4669, թ. 202ա:

12 Ըստ Թ-ովմա Մեծոփեցու՝Գրիգոր Տաթեւացու աշակերտները 1409 թ. նրան գաղտնի կերպով «սռեալ գնացին ի գաւառն Այրարատեան, առ մեծ վարժապետն Յակոբ Սաղմոսավանից...» (**Թ-ովմա Մեծոփեցի**, էջ 82):

13 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. N 4669, թ. 197ա:

14 Տե՛ս **Մ. Իգմիրլեան**, Հայրապետութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ Աղթամար եւ Սիս, Կ.Պոլիս, 1881, էջ 293:

15 «ԺԵ դարի ձեռագրերի հիշատակարաններ», I, էջ 105:

16 **Թ-ովմա Մեծոփեցի**, էջ 260:

17 Անդ, էջ 272: Տե՛ս նաեւ **Սիմէոն Երեւանցի**, Ջամբռ, Վաղարշապատ, 1765, էջ 92:

նզովքի պատճառով չի կարող ամոքել իրենց տառապանքները, ցավերը: Դաժան իրականությունը եւս սնունդ էր տալիս նման խռհերի: 1425 թվականին Կարակոյունլու ցեղապետ Իսկենդերի հրոսակները Վանը գրավելուց հետո ասպատակեցին Ռշտունիքը, ապա խուժեցին Աղթամար կղզի: Եւ, գրում է պատմագիրը,«բազումք ի քրիստոնէիցն... սովալլուկ եւ սովատանջ եղեալ մեռանէին: Եւ ոչ կարեմ ընդ թիւ արկանել զմեռեալն եւ զողբումն, զլացն եւ զաղաղակ եւ զկորուստ ազգիս մեր, որ եղեւ ի չար բռնաւորէն...»[18]:

Ստեղծված պայմաններում թուլացավ Աղթամարի կաթողիկոսությունը, խիստ կրճատվեցին նրա ենթակայության տակ եղած թեմերը, անջատվեցին Արծկեի, Արճեշի, Բերկրիի եւ այլ շրջաններ[19]: Ի լրումն ժողովրդի կրած դժբախտությունների, ըստ Աղթամարի Ս. Խաչ վանքում ձեռագիր օրինակած գրչի վկայության, նույն ժամանակ Վասպուրականը շահատակվեց նաեւ Ամիդին իշխող Օթման բեկի հրոսախմբի կողմից, որը «զերկիրն Արճիշոյ եւ զԱրծկոյ բնաջինջ զերի վարեալ եւ սրոյ ճարակ արարեալ... աշխարհս մեր աւերակ, եւ սեղանք եւ դրունք եկեղեցեաց մերոց տապալեալ, եւ սպասք սրբութեանցն զերի վարեալ, եւ աւրիներգութիւնքն Աստուծոյ լռեալ...»[20]:

Չնայած ծանր արհավիրքներին, Աղթամարի Ս. Խաչ վանքում շարունակում էր պահպանվել հավատը վանքի եւ Աղթամարի Աթոռի զորության նկատմամբ: Ուշագրավ է, որ նույն գրիչը շեշտում է, որ Վասպուրականի բնակչության կրած անլուր տառապանքների պայմաններում «միայն խոյակապ Սուրբ Խաչս է մնացեալ իբր զհզաւր թագաւոր՝ անսասան եւ անպարտելի»[21]:

Մինչդեռ օտար եւ այլակրոն բեկերի տիրապետության պայմաններում շարունակվում էին կամայականություններն ու հրոսումներն Աղթամարի նկատմամբ: 1431 թ. քուրդ ցեղապետ Փիրի բեկի հրոսակները գրավեցին Աղթամար կղզին: Աղթամարի Դավիթ Կաթողիկոսն ու հոգեւորականները մազապուրծ փախստյամբ, «մերկ եւ թափուր ի հայրենի ընչիցն»՝ ապաստան գտան Աղթամարի վիճակում գտնվող Մոկաց Կեցան գավառի Ուրանց գյուղում[22]: Եւ միայն երկու տարի հետո՝ 1433 թ. Դավիթ Կաթողիկոսը կարողացավ համաձայնության եզրեր գտնել հիշյալ բեկի հետ եւ վանքի միաբանների հետ վերադառնալ Աղթամար, որտեղ փոքր–ինչ հետո կնքեց իր ալեծուփ կյանքը[23]:

Ծանր էր դրությունը նաեւ Դավիթին հաջորդած Զաքարիա Գ Կաթողիկոսի օրոք[24]: 1437թ. Վանում գրված ձեռագրի գրիչն իր թողած հիշատակարանում Զաքարիա, Գ–ին բնորոշում է որպես «ուղղափառ անբիծ ախոյեան, քաջ եւ յաղթող, զսրբասէր, զաղքա– տասէր[25]»: Նրա գործուն մասնակցությամբ 1441թ. իրականացվեց Հայոց ընդհանրական Աթոռը Ս. Էջմիածին տեղափոխելը: Այդ ազգաշահ գործին լծվեցին Սյունյաց, Այրարատի եւ Աղթամարի հոգեւոր այրերը: Զաքարիա Գ–ն համոզված էր, որ ինքն է բազմելու Էջմիած-

18 **Թովմա Մեծոփեցի**, էջ 141–142:

19 Հմմտ. **Մ. Օրմանեան**, Ազգապատում, Բ, սյունակ 2404:

20 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», I, էջ 326:

21 Անդ:

22 Տես **Ղ. Փիրղալէմեան**, Նօրարք Հայոց, էջ 102: Տես նաեւ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 6333, թ. 12ա:

23 Տես «Նօրարք Հայոց», էջ 107:

24 Տես «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», I, էջ 452, 463:

25 «Նօրարք Հայոց», էջ 113:

նում վերահաստատված Աթոռին, քանի որ Հայրենի երկրում միայն ինքն ուներ Կաթողիկոսի տիտղոս: Նա սատար կանգնեց Սյունաց եւ Այրարատի հոգեւորականներին, անշուշտ, Վասպուրականում ունենալով կողմնակիցներ: Զաքարիա Գ–ն կարողացավ իր կողմը գրավել Թովմա Մեծոփեցուն, Վասպուրականի հոգեւոր վերնախավին, որոնք համոզված էին, որ նա է Հայոց կաթողիկոսի արժանի թեկնածուն: Թեեւ Կաթողիկոսական գահաթոռին հավակնում էին նաեւ Արտազի Գրիգոր եպիսկոպոսը, Զաքարիա Դահլավունի Հավուցթառեցի արքեպիսկոպոսը եւ Բջնիի Հովհաննես եպիսկոպոսը, սակայն նրանք միակամ էին Մայր Աթոռն Էջմիածնում հաստատելու խնդրում: Նրանց ջանքերով եւ Կարակոյունլու փադիշահ Ջհանշահի (որին ենթակա էին նաեւ Վասպուրականի տերերը) եւ Երեւանի կառավարիչ Յաղուբ բեկի համաձայնությամբ 1441 թ. Էջմիածնում գումարվեց ժողով, որին մասնակցում էին ավելի քան 300 հոգեւոր այրեր, նաեւ «ազատք, եւ որդիք ազատաց, ձեռնաւորք եւ տանուտէրք...»[26]: Համերկրային այդ կաճառը պետք է օրինապատշաճ հիմքերի վրա դներ Մայր Աթոռը իր նախնական սրբավայր՝ Ս. Էջմիածին տեղափոխելու խնդիրը:

Վասպուրականի, Տարոն–Տուրուբերանի, Մոկքի հոգեւոր հայրերը՝ Աղթամարի Ավետիս, Մոկքի Հովհաննես, Խիզանի Կարապետ վարդապետները, Բաղեշի Դավիթ եւ Սահակ եպիսկոպոսները, Սասունի հոգեւոր առաջնորդները, Վարագա, Ս. Կարապետ, Առաքելոց եւ Սալնապատի վանքերի հոգեւոր հայրերը թղթով միաբանեցին ժողովականներին, որից հետո, ինչպես նշում է Թովմա Մեծոփեցին, «եղաք Հայրապետ եւ Կաթողիկոս առաքելական աթոռոյն Թադէոսի եւ Բարթուղիմէոսի եւ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի՝ զտէր Կիրակոս Վիրապեցին...»[27]:

Կիրակոսը ծագումով Վասպուրականի Քաջբերունիք գավառից էր: Նրա առաջին քայլերից մեկն ինչպես նշվեց, Աղթամարի կաթողիկոսության վրայից բանադրանքը վերացնելն էր եւ, դրանով իսկ, Հայոց Եկեղեցու նվիրապետական միասնությունը Մայր հայրենիքում վերականգնելը:

Կաթողիկոսական Աթոռն Էջմիածին տեղափոխելուց հետո Աղթամարի հայրապետությունը պահպանեց իր հովվապետական իրավազորությունն իրեն ենթակա գավառներում, ճանաչելով Էջմիածնի Մայր Աթոռի գերագահությունը եւ հանդես գալով իբրեւ նրան ենթակա եկեղեցական վիճակներից մեկը: Կիրակոսի օրոք վասպուրականցի հոգեւորականները բարձր պաշտոններ ստացան Էջմիածնի Մայր Աթոռում: «Ամենեքան,– գրում է պատմագիրը,– երանի տային կողմանց վարդապետաց եւ քահանայից ծովու բոլորին»[28], իմա՛ Վանա լճի ոլորտի հոգեւոր այրերին: Վասպուրականցիները նաեւ նյութական լայն աջակցություն ցուցաբերեցին Էջմիածնի Մայր Աթոռին: Եւ, հաղորդում է մատենագիրը, Այրարատի ու Վասպուրականի բնակչությունը «մարմնաւոր պիտոյիւք, անասնօք եւ չորքոտանիւք լցին զսուրբ աթոռն»[29]:

Վասպուրականցի հոգեւոր այրերի առանձնաշնորհյալ վիճակը հարուցեց Սյունյաց (Տաթեւի) եկեղեցականների դժգոհությունը: Վերջիններս ոչ միայն առաջատար դեր էին

26 **Թովմա Մեծոփեցի**, էջ 220: Ըստ Արղնիում 1444 թ. գրված ձեռագիր հիշատակարանի, ժողովականների թիվը հասել է 700–ի (տե՛ս «Նստարք Հայոց», էջ 133), ինչն անշուշտ, չափազանցված է:

27 **Թովմա Մեծոփեցի**, էջ 221–222:

28 Անդ, էջ 259:

29 Անդ, էջ 257:

խաղում արեւելահայ եկեղեցական կյանքում, այլեւ հենց իրենք էին նախաձեռնել Կաթողիկոսական Աթոռը Ս. Էջմիածին տեղափոխելը: Այս հետևախորքի վրա Կիրակոս Վիրապեցու Կաթողիկոս ընտրվելուց հետո պառակտում ծագեց հայ եկեղեցականների մեջ: Բայց Աղթամարի Աթոռը չմիացավ Կիրակոսի դեմ դավեր նյութող եկեղեցականներին: Կիրակոսի Կաթողիկոս ընտրվելու հաջորդ տարում նրա հակառակորդները նամակով դիմում են Զաքարիա Հավուցթառեցի եպիսկոպոսին, կշտամբում նրան, գրելով. «Կաթուղիկոս, որ դուք եդեալ եք, է ի կողմանէն Վասպուրական Քաջբերունեաց, եւ ի ներքոյ անիծից եւ բանադրանացն Աղթամարայ, եւ զմեզ եւ զգաւառս մեր արկեալ էք ի ներքոյ անիծից դատապարտութեան»[30]: Կիրակոսին աթոռընկեց անելու մտադրությամբ Ցաղուր բեկին դիմած Հովհաննես Հերմոնեցին «ուրանայ զճշմարտութիւնն», ասելով, որ Կիրակոսին Կաթողիկոս են ընտրել Թովմա Մեծոփեցին եւ «ընկերք նորին», իմա՛ վասպուրականցիները[31]: Թեեւ վասպուրականցի երկու հոգեւորականներ ծառացան Ցաղուր բեկի առջեւ Կիրակոսին անվանարկողների դեմ, Սակայն Հովհաննես Հերմոնեցուն հաջողվեց կաշառել բեկին, եւ վերջինիս հրամանով Կաթողիկոս ձեռնադրվեց Գրիգոր Ժ Արտազեցին: Աղթամարի Զաքարիա Գ Կաթողիկոսը հրաժարվեց ճանաչել Գրիգոր Արտազեցու կաթողիկոսական իրավունքները եւ շարունակեց Կիրակոսին դիտել որպես Հայոց ընդհանրական Աթոռի գահակալ եւ իրեն համարել նրա աթոռակից: Այս առումով ուշագրավ փաստ է, որ 1446 թ. Վանում Հայսմավուրք ընդօրինակած Վարդան գրիչն իր թողած հիշատակարանում նշում է, թե ձեռագիրը գրել է «ի կաթուղիկոսութեան Տեառն Կիրակոսի եւ Տէր Զաքարիայի»[32]:

Կիրակոս Վիրապեցու հրաժարականից հետո Զաքարիա Գ–ն ջանում էր միավորել Էջմիածնի եւ Աղթամարի Աթոռները: Նա կարողացավ իր կողմը գրավել Էջմիածնի Մայր վանքի միաբաններից Սարգիս եպիսկոպոսին եւ նրա օգնությամբ տիրանալ Ս. Լուսավորչի Աջին[33], առանց որի նրա կաթողիկոսությունն օրինական չէր համարվի: Բայց Էջմիածնի Մայր Աթոռին տիրելու համար նա պետք է ստանար Կարակոյունլու փադիշահ Ջհանշահի համաձայնությունը: Զաքարիան անձամբ մեկնեց Ջհանշահի նստավայր՝ Թավրիզ քաղաք, որտեղ նրան շնորհվեց «զպատիւ պատրիարգութեան»: Այնուհետեւ Զաքարիա Գ–ն Ջհանշահի ցուցումով մեկնեց Երեւան, իսկ այնտեղից Ս. Էջմիածին եւ Երեւանի խանի օգնությամբ տիրացավ կաթողիկոսարանին[34]: Դա կատարվեց 1460 թ. եւ վկայված է ժամանակի ձեռագրերում: Այսպես, նույն թվին Միքայել գրիչն Արծկեռում օրինակած Ավետարանի հիշատակարանում նշում է, որ Զաքարիա Գ–ն «յայսմ ամի տիրեաց Էջմիածնին եւ Լուսաւորչի Սուրբ Աջոյն»[35]:

Փաստորեն Զաքարիա Գ եկեղեցական ժողովի որոշմամբ չի ընտրվել Հայոց Կաթողիկոս, եւ Գրիգորը ժողովով չի գահազրկվել: Ամենայն հավանականությամբ Զաքարիա Գ–ն կարողացել է տիրանալ Էջմիածնի Աթոռին շնորհիվ այն հանգամանքի, որ Գրիգոր Ժ-ի

30 Անդ, էջ 261:

31 Տես անդ, էջ 264:

32 Տես «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», I, էջ 596:

33 **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Է. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 342: Տես նաեւ «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, հրատ. Գիւտ աւ. քհ. Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 60:

34 Տես **Առաքել Դավրիժեցի**, էջ 332:

35 «Նօտարք Հայոց», էջ 196: Տես նաեւ «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Ե. Լալայեան, պրակ 1–ին, Թիֆլիս, 1915, էջ 436, «ԺԵ դարի հայերեն ձեռ. հիշատ.», II, էջ 135:

օրոք Էջմիածնի կաթողիկոսությունը հարկային ծանր բեռի տակ էր, որը նա չի կարողացել թեթեւացնել: Աղթամարի կաթողիկոսության կոնդակը պարունակող ձեռագրում ասվում է, որ «Էջման տեղ բազում պարտուց ներքեւ անկեալ էր», եւ Զաքարիա Գ «հատոյց զպարտսն բոլորովին: Սա յաջորդեաց երկուց աթոռոց...»[36]:

Էջմիածնի պարտքերը մարելը, Ջհանշահի հետ հարաբերությունները բարվոքելը բնականաբար մեծացրել են Զաքարիայի հեղինկությունը: 1461 թ. Էջմիածնում Ստեփաննոս գրչի օրինակած «Մաշտոցի» հիշատակարանում Զաքարիան բնորոշվում է որպես «ի բարի յարմատոց շառաւիղ ընտրեալ շնորհաւքն Քրիստոսի յազգէ թագաւորին Գագկայ՝ Հայոց Մեծաց Տէր Զաքարիայի Կաթողիկոս եւ Պատրիարք Վաղարշապատու մեծ քաղաքի եկն ի... հրաշափառ Սուրբ աթոռոյ եւ սքանչելագործ եւ կենսատու Սուրբ Նշանէն՝ Աղթամարայ Սուրբ աթոռոյն... տիրեաց Սուրբ Էջմիածնիս եւ աստուածադիր Սուրբ աթոռոյս Վաղարշապատու եւ ամենայն Հայկազեան սեռի»: Նույն գրչի հավաստմամբ Զաքարիան Էջմիածնում գահակալելիս «վերստին հաստատեաց, շինեաց եւ զարդարեաց զքրիստոսահիմն եւ երկնանման շնորհաբաշխ եւ սրովբէագումար զսուրբ կաթուղիկէ եկեղեցիս...»: Ավելին, շարունակում է նույն գրիչը, Զաքարիան նաեւ «աներկիւղ պահեաց ի մէջ այլազգեաց սեռից»[37], ինչը վկայում է, որ նա կարողացել է խաղաղություն հաստատել իր կարճատեւ գահակալության ժամանակ: Զաքարիան նաեւ բարեգութ վերաբերմունք է ցուցաբերել «տնանկաց եւ կարաւտելոց եւ աւգնական ամենայն տարակուսելոց, եւ խնամածու ուսումնասիրաց եւ կրաւնաւորաց»[38]:

Առաքել Դավրիժեցին գրում է. «Ամենայն Հայոց Կաթողիկոս» Զաքարիա Գ ժամանելով Ս. Էջմիածին, «...նստաւ ինքնակալ Պատրիարգ ընդհանուր ամենայնի քրիստոնէական ազգի... եւ հովուէր զամենեսեան ի հաւատս ուղղափառ Նիկիականի սուրբ դաւանութեան»[39]: Այդպիսով, Զաքարիա Գ–ն հավատարիմ է մնացել Նիկիայի 325 թ. առաջին տիեզերաժողովի սահմանած Հավատո հանգանակին եւ Հայոց նախնավանդ հավատքին ու հայադավան վարդապետությանը:

Զաքարիա Գ–ն պատեհ առիթներով նաեւ հանդես էր գալիս թուրքմեն եւ քուրդ տիրողների միջեւ ծագած գժտությունները մեղմելու առաքելությամբ, առաջին հերթին, իհարկե, ելնելով հայ բնակչության անվտանգության պահպանման շահերից: 1461 թ. Բաղեշի քուրդ ամիրան ծառանում է Ջհանշահի դեմ, հրաժարվելով հարկ վճարելուց: Վերջինս 12 հազարանոց հեծելազորով պաշարում է Խլաթը, ավերում, կողոպուտի մատնում նրա գավառը, սպառնալով նույնը կատարել նաեւ Բաղեշի, Մուշի, Խութի եւ Սասնա գավառներում[40]:

Զաքարիա Գ գիտեր, որ այդ պատժարշավի հետեւանքով օրհասի է մատնվելու հիշյալ գավառների հայ բնակչությունը: Դա կանխելու նպատակադրումով նա Ջհանշահին գրավոր ձեւով խոստանում է որ Բաղեշի ամիրայից կվերցնի հարկագումարը եւ կփոխանցի իրեն: Այնուհետեւ ստանալով Ջհանշահի համաձայնությունը, Զաքարիա Գ–ն մեկնում է ամիրայի մոտ՝ Բաղեշ, որի բնակչության մեծ մասը ԺԶ դ. քուրդ մատենագրի վկայությամբ

36 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 5467, թ. 42ա: Տե՛ս նաեւ «Բազմավէպ», 1897, էջ 415:
37 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», II, էջ 154–156:
38 Անդ, էջ 156:
39 **Առաքել Դավրիժեցի**, էջ 331–332:
40 Տե՛ս անդ, էջ 332:

հայեր էին[41]: Բաղեշում Հայոց Կաթողիկոսին դիմավորում են մեծ շուքով: Ամիրան խոստանում է մուծել հարկը:

Սակայն Զաքարիա Գ–ին վիճակված չէր երկար աթոռակալել Էջմիածնում: 1461 թ., երբ Ջհանշահի դեմ ապստամբեց նրա որդին՝ Շիրազի կառավարիչ Փիր–Բուդաղը, Արարատյան երկրում մոլեգնող նրա մյուս որդու՝ Հասան–Ալիի հալածանքներից խույս տալով՝ Զաքարիա Գ–ն վերցնում է Ս. Լուսավորչի Աջը, նաեւ ուրիշ սրբություններ եւ 1461–ի ցրտաշունչ ձմռանը հեռանում Բագրեւանդ գավառի Բագավան ավան: Այնտեղից՝ նա մեկնում է Վասպուրական, այցելում Վան քաղաք, որի կառավարիչը՝ Ջհանշահի եղբայր Մահմուդ բեկը մեծարանքով է ընդունում նրան: Վանից Զաքարիան մեկնում է Աղթամար՝ 1461 թ. դեկտեմբերի 11–ին[42], ընդմիշտ հրաժարվելով Էջմիածին վերադառնալու մտքից:

Էջմիածնի Կաթողիկոսի գահաթոռին բազմեց Գրիգոր Ժ, Հասան–Ալիի օժանդակությամբ, որի օրոք Զաքարիա Գ շարունակում է կրել «Հայոց Կաթողիկոսի» պատվատիտղոսը[43]: Սակայն նրա հոգեւոր իրավազորությունը սահմանափակվում էր Աղթամարի Աթոռին ենթակա գավառներով:

41 Տեմ **Шараф–хан Бидлиси**, Шараф–наме, т. I, Москва, 1967, էջ 430:

42 Տեմ **Մ. Օրմանեան**, Ազգապատում, Բ, սյունակ 2526:

43 «Նստարք Հայոց», էջ 208: «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», II, էջ 178, 184–185, 196: